ISSN 1829-2925

ՇՈՂԻԿ

Shoghik
2023/4

AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Լիլիթ Անտոնյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Editorial Board:
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Lilit Antonyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01U 000035
Հրատարակչության 22-րդ տարի

«Շողիկից» մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA) © ՀԱԵ / ECA

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 4.000:
Տարածվում է անվճար:

Իսկ դուք որտե՞ղ էիք

Այսօր կանգնելով ցավալի և դաժան իրականության, ահռելի կորուստների ու հիասթափությունների առջև՝ թերևս ճիշտ է, որ հարցեր բարձրացնենք: Հարցեր, որոնք ուղղված են Աստծուն, մեր ծնողներին, ավագ սերնդին: Այս հարցերի տեղատարափի մեջ կախված է ամենամեծ հարցը՝ ինչո՞ւ: Թերևս այս հարցն առաջինն ուղղում ենք Աստծուն՝ մեղադրելով Նրան մեզ չփրկելու, չպաշտպանելու մեջ: Այնուհետև այս հարցն ուղղում ենք մեզնից ավագ սերնդին՝ ինչո՞ւ: Ստանալով տարբեր «արդարացնող» պատասխաններ, տարբեր պատճառաբանություններ, մեղադրանքներ բոլորի հասցեին՝ լուռ և գլխիկոր հեռանում ենք: Այս հարցը մեղադրաբար ուղղում ենք բոլորին, մեղադրում, դատապարտում ամբողջ աշխարհին, բայց երբեք՝ ոչ ինքներս մեզ: Յուրաքանչյուրս մեր հերթին այս «ինչո՞ւն»՝ որպես մի մեծ աշտարակ, կանգնեցնում է բոլորի առաջ, մատնացույց անում բոլորին, բայց ոչ երբեք ինքներս մեզ: Մեր մատի ուղղությունը շրջենք դեպի մեզ, այդ ժամանակ գուցե իսկապես գտնե՞նք պատասխանը:

Ինչո՞ւ... որովհետև արհամարհեցի Աստծո օրենքն ու պատվիրանը, չլսեցի և չկատարեցի Աստծո խոսքը: Իսկ Աստծուն հիշեցի միայն նեղության ժամանակ: Վերջում էլ հայտարարեցի, որ այս ամենը սուտ է, քանզի եթե իրական լիներ, Աստված անպայման ինձ կօգներ...
Ինչո՞ւ... որովհետև դպրոցում, համալսարանում չսովորեցի, իսկ այժմ բողոքում եմ, որ խելացի և կրթված առաջնորդներ չունենք...
Ինչո՞ւ... Այս շարքը կարելի է անվերջ շարունակել:

Այսօրվա մանուկներն ու պատանիները, երիտասարդները, որոնք իրենց կյանքի գնով են վճարում այս ամենի համար, իրավունք ունեն իրենց ավագ սերնդի առաջ հարց բարձրացնելու՝ «Իսկ դուք որտե՞ղ էիք»: Բայց գոնե այս անգամ եկեք անկեղծ լինենք ինքներս մեզ հետ և մեղքն ուրիշի վրա չդնենք: Այլևս իրավունք չունենք:
Եվ հիմա՝ որպես երիտասարդներ ու պատանիներ, որպես մանուկներ, ովքեր ապագան են, չկրկնենք պատմության նույն սխալները: Կեղծ կրոնապաշտությունից ու աստվածապաշտությունից դառնանք դեպի Ճշմարտությունը, «մեր աչքերը բարձրացնենք դեպի լեռները, որտեղից գալու է մեր փրկությունը» Սաղմոս 121.1: Երեսնիվայր ընկնենք Աստծո առաջ, ինչպես Հեսուն Իսրայելի պարտությունից հետո ընկավ Աստծո առաջ: Խնդրենք, որ Աստված մեզ ցույց տա մեր պարտության պատճառը: Քաջություն ունենանք մեր մեջ հատ առ հատ սպանելու այն, ինչն այսօր սպանում և ոչնչացնում է մեզ՝ մեղքն ու անաստվածությունը: Քանի դեռ հնարավորություն ունենք, քանի դեռ կանք, քանի դեռ ապրում ենք, որպեսզի մեր հաջորդ սերունդներն էլ մեզ չհարցնեն՝ «Իսկ դուք որտե՞ղ էիք...»:

Լիլիթ Անտոնյան

ԿՅԱՆՔ ՓՈԽՈՂ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հիսուսն անցնում էր Երիքովի միջով: Այնտեղ Զակքեոս անունով մի մարդ կար, որը մաքսապետ էր և հարուստ: Նա շատ էր ցանկանում տեսնել Հիսուսին, բայց բազմության պատճառով չէր կարողանում, քանի որ կարճահասակ էր: Ուստի առաջ վազելով՝ բարձրանում է ժանտաթզենու վրա, որ տեսնի Հիսուսին, Որը պիտի անցներ այդ տեղով:
Երբ Հիսուսը մոտենում է ծառին, վեր է նայում և տեսնելով Զակքեոսին՝ ասում է. «Զակքեո՛ս, շուտ արա, իջի՛ր, որովհետև այսօր Ես քո տանը պետք է մնամ»:

Զակքեոսն արագ իջնում է և ուրախությամբ ընդունում է Նրան, իսկ բոլոր տեսնողները տրտնջում են ու ասում. «Հյուր գնաց մի մեղավոր մարդու տուն»:

Իսկ Զակքեոսը կանգնում ու Տիրոջն ասում է. «Տե՛ր, ահա ունեցվածքիս կեսն աղքատներին կտամ և եթե մեկին զրպարտությամբ զրկել եմ, քառապատիկը կհատուցեմ»:

Հիսուսն էլ նրան պատասխանում է. «Այսօր այս տանը փրկություն եկավ, որովհետև սա էլ Աբրահամի որդի է: «**Որովհետև Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին»:**

Ավետարան ըստ Ղուկասի 19.1-9

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԵՐ ՍԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ։

ՊԱՏՐԱՍՏԻՐ 20 ԹՂԹԵ ԱՐՏԻԿ։
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՎՐԱ ԳՐԻՐ ՆԵՐՔՈՆՇՅԱԼ ԿԵՏԵՐԻՑ ՄԵԿԸ։
ՍԻՐԻ՛Ր ԴՐԱՅՈՒԴ ՔՈ ԱՆՁԻ ՊԵՍ։ ՄԱՏԹԵՈՍ 22. 39

- Երբ դրսում ծանոթ մարդ ես տեսնում, սիրալիր ժպտա նրան և բարևիր:
- Կիսիր ուտելիքդ դասընկերոջդ հետ:
- Ընկերներիդ համար բացիկ կամ փոքրիկ նվեր պատրաստիր հենց այնպես, առանց առիթի:
- Կիրակնօրյայի ուսուցչուհուդ ծաղիկներ նվիրիր:
- Թղթի վրա գրիր, թե որքան շատ ես սիրում հայրիկիդ և մայրիկիդ:
  Այն աննկատ դիր նրանց գրպանում:
- Մայրիկի թույլտվությամբ տանը ծաղիկներ աճեցրու:
- Քո ամենօրյա գրպանի գումարից տուր այն տատիկին կամ պապիկին, ով դրա կարիքն ունի:
- Ավտոբուսում զիջիր տեղդ:
- Այցելիր ընկերոջդ, ով հիվանդ է և բացակայել է դասից:
- Հաճոյախոսիր ընկերներիդ, ուսուցիչներիդ կամ կողքդ գտնվող որևէ մեկին,
  բայց զգույշ եղիր, որ հաճոյախոսությունը լինի ի սրտե:
- Որևէ սնունդ կամ քաղցրավենիք գնիր նրա համար, ով դրա կարիքն ունի:
- Խանութում, գնումներ կատարելուց հետո, աշխատակցին շնորհակալություն հայտնիր:
- Երբ ընկերդ քեզ հետ խոսում է, ուշադիր լսիր նրան:
- Մայրիկիդ համար բացիկ պատրաստիր և վրան գրիր, թե ինչու ես նրան շատ սիրում:
- Խաղալիքներովդ կիսվիր բակի կամ եկեղեցու երեխաների հետ:
- Աստվածաշնչից առանձնացրու քո սիրելի համարները: Դրանք գրիր թղթի վրա,
  գեղեցիկ գունազարդիր և նվիրիր կիրակնօրյա դպրոցի ընկերներիդ:
- Հաճախ օգտագործիր՝ *խնդրեմ, կներեք, շնորհակալություն* բառերը:
- Աղբը միշտ աղբամանի մեջ թափիր: Այդպես կօգնես փողոցը մաքրող աշխատողներին:
- Ձեր տուն հրավիրիր ընկերներիդ:
- Դպրոցում կողքիդ նստող դասընկերոջդ համար փոքրիկ անակնկալ պատրաստիր:

ԱՅՍ ՑԱՆԿԸ ԿԱՐՈՂ ԵՍ ԵԼՐՈՒՆԱԿԵԼ ԻՆՔԴ։

ԱՂՈԹՔԻ

1. Կարդա Ղուկաս 11.1–2 համարները և փառաբանիր Աստծուն:
2. Գրիր, թե ինչ լավ իրադարձություններ են կատարվել քո կյանքում վերջերս կամ այժմ կատարվում են: Շնորհակալություն հայտնիր Աստծուն դրանց համար:
3. Ընկերոջդ հետ միասին աղոթեք: Շնորհակալություն հայտնեք, որ Աստված ձեզ ընկերներ է տվել: Հիշեք նաև ձեր մյուս ընկերներին:
4. Աստվածաշնչից կարդա Հռոմեացիների 8.15–16 համարները: Աղոթքիդ մեջ Աստծուն դիմիր որպես Հայր:
5. Թղթի վրա գրիր, թե ինչ կցանկանայիր հարցնել Աստծուն: Խնդրիր, որ Նա պատասխանի քեզ:
6. Աղոթիր կամ Աստվածաշնչից կարդա Տերունական աղոթքը (Մատթեոս 6.9–13):
7. Աղոթիր հավատակից ընկերներիդ համար:
8. Աղոթիր ընտանիքիդ անդամների համար:
9. Աղոթիր կիրակնօրյա դպրոցի առաջնորդների համար:
10. Աղոթիր նրանց համար, ովքեր մարդկանց պատմում են Աստծո մասին:
11. Ուշադիր նայիր հայելու մեջ: Շնորհակալություն հայտնիր Աստծուն, օրինակ, որ քեզ գեղեցիկ աչքեր է տվել:
12. Աստված բժշկող է: Աղոթիր Աստծուն որևէ հիվանդի համար, նաև բժիշկների համար, որպեսզի Աստված նրանց միջոցով բժշկի:
13. Աղոթիր հայրիկիդ համար: Երբ աշխատանքից վերադառնա, նրան հարցրու, թե ինչպես է անցել նրա օրը:
14. Գրիր քո բոլոր ուսուցիչների անունները: Աղոթիր նրանցից յուրաքանչյուրի համար:
15. Աղոթիր քո եկեղեցու համար:

ՕՐՍՑԼԵՑ

16 Աղոթիր տատիկիդ և պապիկիդ համար:
17 Շնորհակալություն հայտնիր Աստծուն, որ քեզ ամեն օր հաց է տալիս:
18 Այսօր աղոթիր <<Շողիկի>> անձնակազմի համար:
Նրանց անունները կարող ես գտնել առաջին էջում:
19 Կազմիր ամենամոտ ընկերներիդ ցանկը: Անուն առ անուն աղոթիր նրանց համար:
20 Գիտե՞ն, թե ով է քո երկրի ղեկավարը: Աղոթիր նրա համար:
21 Մի պահ պատուհանից դուրս նայիր:
Շնորհակալություն հայտնիր Աստծուն այն ամենի համար ինչ տեսնում ես:
22 Աղոթիր քո մեծ ընտանիքի համար (հորաքույր, մորաքույր, հորեղբայր...):
23 Ինչի՞ մասին ես ամենաշատը երազում:
Պատմիր երազանքներդ Աստծուն և խնդրիր, որ ըստ Նրա կամքի դրանք կատարվեն:
24 Աստվածաշնչից կարդա Մատթեոս 7.7 համարը: Գրիր այն թղթի վրա և անգիր սովորիր:
25 Աղոթիր քույրիկիդ կամ եղբորդ համար:
Իսկ եթե դեռ չունես, աղոթիր, որ Աստված քեզ եղբայր կամ քույր պարգևի:
26 Աղոթիր, որ այն ինչ սովորում ես կիրակնօրյա դպրոցում,
կարողանաս նաև կիրառել քո կյանքում:
27 Աստվածաշնչից կարդա Սաղմոս 8-ը: Փառաբանիր Աստծուն իր մեծության համար:
28 Եթե ինչ-որ մեկը քեզ նեղացրել է, աղոթիր նրա համար և Աստծուց խնդրիր,
որպեսզի կարողանաս ներել նրան:
29 Աստծուն խոստովանիր քո մեղքերն ու սխալները: Շնորհակալություն հայտնիր,
որ Հիսուս Քրիստոսի միջոցով Աստված ներել է քեզ:
30 Ասա Տերունական աղոթքը:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Չորս հարյուր ինն սունինը թվականի գարնանային մի տաք երեկո Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի բացօթյա դահլիճներից մեկը լեփ-լեցուն էր: Բեմի վրա՝ փափուկ բազմոցների մեջ, նստած էին պատկառելի տարիքի մի քանի այր: Նրանք մեծանուն փիլիսոփաներ էին, գիտնականներ ու պատմիչներ, որոնք եկել էին ղեկավարելու աշխարհի տարբեր կողմերից ժամանած վաթսուն իմաստասերների մրցույթը: Վերջիններիս թվում էր նաև մի հայ երիտասարդ փիլիսոփա, անունը՝ Դավիթ:

Դահլիճը լարված հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչ հարցեր կտրվեն, և ինչպես կպատասխանեն իմաստասերները: Դա խելքի, իմացության, գիտելիքի, ճկուն մտածողության մրցույթ էր: Արդյոք ո՛վ պիտի դառնար օրվա հերոսը, ո՛վ պիտի շահեր հաղթանակի դափնին:

Ահա հրապարակ դուրս եկավ հայորդի Դավիթը: Մեծահամբավ իմաստասեր Օլիմպադորասը հետաքրքրությամբ նայեց նրան, ապա ծանրումեծ հարցրեց - Երիտասա՛րդ, ի՞նչն է աշխարհում հավերժական:
- Ժամանակը, - անվարան պատասխանեց Դավիթը, - այն անտեսանելի է, անշոշափելի, անսկիզբ, անվերջ ու անվախճան:
- Կա՞ տիեզերքում որևէ բան, որ հավերժական ընթացքի մեջ է և երբեք կանգ չի առնում:
- Կա՛: Դարձյա՛լ ժամանակը: Այն հոսում է անդադար, անկախ որևէ մեկի ցանկությունից: Միակ բանն է ողջ տիեզերքում, որը ո՛չ կանգնեցնելու, ո՛չ սանձելու ի զորու չենք:.

Եվ կրկին հարց առաջադրեցին Դավթին.
- Ո՞րն է երկարակեցության գաղտնիքը:
- Քչակերությունը, ժուժկալությունը, սակավապետությունը: Ոչ թե պիտի ապրել ուտելու, այլ ուտել՝ ապրելու համար:
- Այն ո՞ր առաքինությունն է, որ մարդուն մոտեցնում է Աստծուն:

- Աստծո նման սիրել աշխարհն ու մարդկանց, կյանքում առաջնորդվել Աստվածաշնչի ոսկե օրենքով. «Այն, ինչ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ համար, այնպես և դուք արեք նրանց համար»:

- Անսահմանության մեջ ի՞նչն է ամենից արագ թռչում:
- Մի՛տքը: Այն վայրկենապես կարող է կտրել հեռավոր աշխարհներ, թափանցել օվկիանոսների հատակը, կարող է սլանալ դարերի խորքը, հասնել բիբլիական ժամանակներ, հաղորդակցվել նախամարդու, Ադամի ու Եվայի, Հիսուս Քրիստոսի հետ:

- Ո՞վ է ամենահմաստունը բոլոր ժամանակների համար:
- Բնությունը՝ Մայրը ամենայն գեղեցիկի և բարու: Նա գիտի ամեն ինչ իր տեղում և ժամանակին անել: Բնությունն անսխալական է:

Հարց ու պատասխանն ավարտվեց: Մի պահ տևած լռությանը հաջորդեց բուռն ծափահարությունը: Ունկնդիրները հոտնկայս վանկարկում էին.
- **Դավիթ Արմենիո՛ս, Դավիթ Անհա՛դթ:**

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՆԵՐ

Հայ մարդը, հնագույն ժամանակներից սկսած, երբ իր հարևանները դեռ հավաքչությամբ էին զբաղվում, քաղաքակիրթ ձևով կենցաղավարություն էր անցկացնում: Հայկական հնագույն գյուղական կացարանները շատ քիչ փոփոխություն են կրել դարերի ընթացքում և իրենց կառուցվածքով հիմք են ծառայել այսօրվա գյուղական տների համար:

Հույն պատմագիր Քսենոփոնն իր «Անաբասիս» աշխատության մեջ նկարագրում է հին հայկական բնակարանների կառուցվածքը և հայերի ապրուստն ու կացության ձևը Ք.ա. 5-րդ դարում: Նա գրում է. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասը՝ ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր հողի մեջ, մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այնտեղ կար նաև ցորեն, գարի, ընդեղեն և կրատերների մեջ գարուց պատրաստված գինի:

Միջնադարյան տների նախագծերում օջախին հատկացվում էր սրահի կենտրոնական մասը, որտեղից ծուխը, վեր բարձրանալով, դուրս էր գալիս երդիկից: Հետագայում օջախը տեղափոխվում է սենյակի մի անկյուն, իսկ երդիկը փոխարինվում է ծխնելույզով:

Կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր: Ծարավելու դեպքում մարդը պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Այն շատ թունդ էր, եթե դրան ջուր չխառնեին, մինչդեռ սովոր մարդու համար ախորժելի ընպելիք էր: Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ դրված չլիներ գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ քանակությամբ ցորենի և գարու հացահատիկ»:

Հին հայկական տների ճարտարապետության մեջ իր ուրույն տեղն ուներ երդիկը: Այն տան կտուրին թողած բացվածք էր, որը ծառայում էր իբրև բնական լույսի աղբյուր և օդանցք: Երդիկի ձևն ու չափերը կախված էին շինության գործառական նշանակությունից: Տներում այն սովորաբար քառակուսի էր, իսկ գոմերում՝ ուղղանկյուն: Բոլոր շինություններում, կախված նշանակությունից, տեղադրվում էին մեկ կամ մի քանի երդիկ՝ ծածկի տարբեր հատվածներում: Վերևից երդիկի փայտե շրջանակին տեղադրում էին բացվածքով քարե քառակուսի կամ ամրացնում կոտրած տակով կուժ: Գեղարքունիքում, երբեմն նաև Շիրակում, երդիկի շրջանակի գերաններին կիսաշրջանաձև փորվածքներ էին արվում, որպեսզի լույսն ավելի լավ թափանցի:

Հին հայկական տների հաջորդ ուշագրավ հատվածը օջախն էր: Պատմական և ժամանակակից գործածությամբ այն աղյուսաշեն կամ քարաշեն կրակատեղի է՝ վառարանով, կամ առանց դրա, որն օգտագործվում է տունը տաքացնելու կամ կերակուր պատրաստելու նպատակով: Դարեր շարունակ օջախը հանդիսացել է տան անբաժանելի մասը՝ զբաղեցնելով դրա կենտրոնական և ամենակարևոր տեղը: Եվ պատահական չէ, որ «օջախ» եզրը ընդհանրապես առնչվել է «տուն» հասկացության հետ, այստեղից էլ, օրինակ, «օջախի ծուխը ծխալ», «օջախի կրակը վառ պահել» դարձվածքները կամ «օջախդ շեն մնա» օրհնանքը:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ, ՈՐՆ ԱՅՍՕՐ ՉԿԱ

Դարերի խորքից է գալիս մեր սիրելի մայրաքաղաք Երևանի պատմությունը: Ճիշտ է՝ մատենագրական աղբյուրները լռում են դրա հնագույն և նախաքրիստոնեական շրջանի պատմության մասին, սակայն քարեղեն ապացույցները, սեպագիր ու վիմագիր արձանագրություններն առավել խոսուն են: Արդյոք կա՞ մի հայ, ում հարազատ չեն *Էրեբունի, Արինբերդ, Շենգավիթ, Կոնդ, Ծիծեռնակաբերդ* և այլ անուններ, որոնք իրենց քարեղեն լռությամբ հաստատում են աշխարհի հնագույն բնակավայր Երևանի ծնունդն ու պատմությունը: Եվ ո՞վ գիտի, թե դեռ ինչքան չբացված պատմության էջեր ունի մեր մայրաքաղաքը:

301 թվականին՝ քրիստոնեական դարձից հետո, Երևան գյուղաքաղաքը դարձավ հայ քրիստոնեական ճարտարապետության օրրաններից մեկը: Դարեր շարունակ նա եղավ Հայաստան աշխարհին բաժին ընկած դաժան ճակատագրի մասնակիցը: Բազմաթիվ բարբարոս ցեղեր ու հրոսակախմբեր արշավեցին, բյուրավոր տարերային աղետների ու երկրաշարժերի դիմակայեց Երևանը, երբեմն ծնկի եկավ, սակայն ոտքի կանգնեց իր հզոր բերդով, հայ ժողովրդի ազատատենչ ոգով և դեպի երկինք խոյացող իր եկեղեցիների հավատավոր խաչերով:

Ցավոք շատ հաճախ ավերվեցին Երևանի եկեղեցիները, երբեմն՝ վերակառուցվեցին, երբեմն էլ՝ փոխարինվեցին նորերով և կամ մոռացվեցին պատմության էջերում:

Խորհրդային տարիներին փակվեցին Երևանի շատ եկեղեցիների դռներ. դրանց մի մասը քանդվեց և կամ վերածվեց պահեստների, թանգարանների և այլն: Իսկ այս մեկը՝ Սբ. Պողոս-Պետրոսը, մի՛ զարմացեք, վերածվեց կինոթատրոնի. 1931-ին այն քանդեցին և դրա տեղը կառուցեցին «Մոսկվա» կինոթատրոնը: 1940 - ական թվականներին, երբ լայնացնում էին Հանրապետության հրապարակ տանող Ամիրյան փողոցը, զոհաբերվելու հերթը հասավ նաև Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն. այն նույնպես վերածվեց կինոթատրոնի, այն էլ «Անաստված» անվանումով: Տուֆակերտ այս եկեղեցու կառուցումը սկսվել էր 1869 թ. և որոշ ընդհատումներով ավարտվել 1900 թվականին: Երկու տարի անց եկեղեցուն կցակառուցվել էր վեր սլացող զանգակատունը: Սիրով ու խնամքով կառուցված այս գմբեթավոր եկեղեցին կրկնությունն էր հայկական եկեղեցաշինության ճարտարապետական մտքի: Այն իր ծավալաներդաշնակ ճարտարապետական մտահղացմամբ և գունային ներդաշնակությամբ լրացնում էր հին Երևանի այս գողտրիկ անկյունը: Ավելի ուշ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեղում կառուցվում է Եղիշե Չարենցի անվան դպրոցը:

Ցավոք, այսօր շատ քիչ բան կարող ենք ասել Սբ. Պողոս-Պետրոս և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների մասին, քանի որ դրանց ավերակներն անգամ չեն պահպանվել:

Նկարում՝ Գոշավանքի եկեղեցին (12-րդ կամ 13-րդ դար)

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Սիրիայի հայ ավետարանական համայնքը տեղի հայության դավանանքային երեք շերտերից մեկն է՝ հայ առաքելական և կաթողիկե համայքների հետ միասին: Այն աշխարհում առաջին հայ ավետարանական համայնքներից մեկն է և այդ իմաստով լինելով ամենահինը՝ անցել է պատմական զարգացման որոշակի փուլեր:

Սիրիայում հայ ավետարանական համայնքներ ձևավորվել են 19-րդ դարի կեսին, երբ այդ երկիրն Օսմանյան կայսրության մաս էր կազմում: Օսմանյան կայսրության հայության շրջանում տարածում ստացող բողոքականությունն անմասն չթողեց նաև Սիրիայի առաջին հայ ավետարանական համայնքները: Հալեպում Հայ Ավետարանական եկեղեցի հիմնադրվեց 1852թ., Քեսաբում՝ 1853թ.: Նախացեղասպանական շրջանում հայ ավետարանականությունն ընդգրկում էր հիմնականում երկու բնագավառ՝ հոգևոր-եկեղեցական և կրթական: Ավետարանական եկեղեցիներին կից գործում էին նաև դպրոցներ:

Հայոց ցեղասպանության հետևանքով հազարավոր հայեր, այդ թվում նաև՝ ավետարանականներ, Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից գաղթեցին և

հաստատվեցին Սիրիայում, ինչը հանգեցրեց ինչպես տեղի հայ ավետարանական համայնքների ստվարացմանը, այնպես էլ նորերի ձևավորմանը: Հալեպից և Քեսաբից բացի հայ ավետարանական համայնքներ ձևավորվեցին նաև Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում և Եղեռնի հետևանքով հայաշատ դարձած այլ բնակավայրերում: Ցեղասպանության հետևանքով առաջացած մարտահրավերներն ընդլայնեցին հայ ավետարանական համայնքի գործունեությունը: Հոգևոր-եկեղեցական և կրթական ոլորտներին ավելացան սոցիալականը, մշակութայինը և այլն, ինչը ենթադրում էր նաև կազմակերպչական կառույցների ընդլայնում թե՛ քանակական, թե՛ տարատեսակային (բազմազանության) առումներով:

Սիրիայի հայ ավետարանական կառույցների գործունեության համահայկական բնույթը դրսևորվում է հոգևոր, կրթական և սոցիալական ոլորտներում, որը, չնայած վերջին տարիների տարաբնույթ դժվարություններին, շարունակվում է մինչ օրս:

19-րդ դարի վերջից սկսած արվել է ամեն ինչ՝ հայ ավետարանական դպրոցներում հայեցի կրթությունն ապահովելու համար: Այդ նպատակով հայ ավետարանականները մի շարք գյուղերում, որոնց բնակիչները միայն հայեր էին, պարտադիր են դարձնում հայերենի և մի շարք առարկաներ հայերենով ուսուցանումը: Հայ ավետարանական դպրոցներում ուսանող աշակերտների դավանանքային կազմը բոլոր ժամանակներում չի սահմանափակվել միայն ավետարանական երեխաներով: Հայ առաքելական երեխաների կողմից բողոքական դպրոցներ հաճախելն ընդունված է եղել դեռևս նախացեղասպանական շրջանում՝ կապված ազգային դպրոցների անմխիթար վիճակի հետ:

Այսպիսով, Սիրիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների ակտիվ գործունեությունն աշխուժություն է հաղորդել և շարունակում է հաղորդել համայնքի կյանքին:

Դրանց գործունեության տարածումը ողջ սիրիահայության շրջանում, միջդավանական շփումներն ու համագործակցությունը տեղի Հայ առաքելականների և կաթողիկեների հետ վկայում են այն մասին, որ Սիրիայի հայ ավետարանական համայնքը կազմում է տեղի հայ համայնքի անբաժանելի մասը:

Դո՛ւ էլ միացիր

Եթե ցանկացած ճամբարականի հարցնենք, թե ինչ հիշողություն է իր հետ տուն տարել, ապա առնվազն մեկ հետաքրքրաշարժ դեպք կմտաբերի: Իսկ եթե հարցն ուղղենք եկեղեցում ծառայություն ունեցող մարդկանց, ապա նրանց զգալի մասը կփաստի, որ Աստծուն հետևելու որոշումը կայացրել է հենց ճամբարում: Գեղեցիկ և հետաքրքիր կազմակերպված ծրագրի հիմքում, իհարկե, կա մեկ գլխավոր նպատակ՝ ճամբարականին օգնել ավելի մոտենալու իր Արարչին:
Այս տարվա պատանեկան ճամբարը նույնպես բացառություն չէր: Հինգօրյա ծրագրի նպատակը մեկն էր՝ միանալ Աստծուն: «Դո՛ւ Էլ միացիր» խորագիրը կոչ էր՝ լինելու ճամբարի մի մասնիկը և իհարկե միանալու Նրան:
Ճամբարը կարելի է համարել հաջողած, եթե դրա մասին պատմում են նրանք, ում համար այն կազմակերպվել էր:

«Երբ ճամբարից վերադարձա տուն, կարծես այլ մարդ լինեի: Մենք ընտանիքով սովորություն ունենք երեկոյան մեր օրն արժևորելու և վերջում Աստծուն շնորհակալություն հայտնելու: Ճամբարից վերադառնալուց հետո նախաձեռնությունն իմ ձեռքը վերցրեցի: Հիմա ամեն օր ընտանիքիս հետ կիսվում եմ այն ամենով, ինչ սովորել եմ ճամբարում, անդադար խոսում եմ այն մասին, որ կյանքս նվիրել եմ Աստծուն և որոշել եմ ամբողջ կյանքի ընթացքում քայլել Նրա հետ: Ձեռք եմ բերել նաև համարձակություն՝ պատմելու Աստծո մասին նրանց, ովքեր հերքում են Աստծո գոյությունը և Նրա կատարած գործերը: Սրանից մեծ երջանկություն չի կարող լինել»:

ՁԵՌՔԴ ՍՐՏԻ

#ՄԱՆԿԱԿԱՆ

«Երբ ճամբարում որոշում կայացրինք մեր կյանքը նվիրել Աստծուն, ճամբարը մեզ նվիրեց Նոր Կտակարաններ: Տուն վերադառնալուց հետո ամեն օր կարդում եմ Աստծո խոսքը: Երբեք չեմ հաճախել կիրակնօրյա դպրոց, տանը երբեք չեն խոսել Աստծո մասին, բայց ես որոշում եմ կայացրել միանալ Աստծուն և սովորել այն կյանքի խոսքերը, որոնք գրված են Նոր Կտակարանում»:

Իհարկե ուրախանում ենք, երբ այս վկայությունները լսում ենք պատանիներից: Սակայն պակաս կարևոր չէ, երբ քաջալերական խոսքեր ենք լսում նրանցից, ովքեր հինգ օր, գիշեր ու ցերեկ լինում են պատանիների հետ և առաջնորդում են Սուրբ Գրային սերտողությունները: Առաջնորդներից մեկը դեռ ճամբարում մոտեցավ մեզ և ասաց, որ սերտողությունները համապատասխան էին ոչ միայն պատանիների կարիքներին, այլև հենց իր, քանի որ դրանք հնարավորություն տվեցին նորովի մտորելու Աստծո էության մասին:

Նմանատիպ վկայություն լսեցինք նաև մեկ այլ առաջնորդից, ով ճամբարից հետո նամակ էր ուղարկել թիմին՝ նշելով, որ այս տարվա ճամբարը օրհնություն է եղել իր համար, հատկապես առավոտյան պաշտամունքի ժամանակ առաջնորդների վկայություններն ու մենիկ պահերը:
Փառք ենք տալիս Աստծուն, որ շարունակում ենք լսել նման պատմություններ ճամբարի մասին և ցանկանում ենք նշել, որ ոչ մի մարդկային գործ չի հաջողվի, եթե կենտրոնում չլինի Աստված: Այս պատմությունները վկայում են ոչ թե մարդկանց, այլ միայն Աստծո կատարած գործի մասին: Այսօր աղոթում ենք, որ ցանկացած սերմ, որ ընկել է պատանիների սրտերում, շարունակի աճել և պտուղ տալ Աստծո արքայության համար:

ՊՍՏՐԱՍՏԵԼԻ ՄԻԱՍԻՆ

Մի բուռ աշուն բերեք

Մի բուռ աշուն բերեք Մթնաձորից,
Ունջը կերած զանգ է աշունն այնտեղ,
Դեղին պատարագ է այնտեղ նորից,
Հոգեվարքի դեղին մի առասպել։

Մի բուռ աշուն բերեք, մի բուռ աշխարհ–
Աղոթելով ամեն քար ու ճմբին…
Խնկի ծուխ է այնտեղ մշուշն աշնան
Նավասարդյան օրվա հողաթմբին…

Թափուր մի բույն բերեք… չված հավքի
Խառն, անընթեռնելի կտցագրով…
Որ ես ողբամ նորից բախտն իմ Հայքի
Եվ իմ թափուր սրտից մնամ խռով։

Մի բուռ աշուն բերեք Մթնաձորից,
Ամպի կծիկ բերեք, անձրևի թել։
Դեղին փոթորիկ է այնտեղ նորից,
Հոգեվարքի դեղին մի առասպել։

Համո Սահյան